

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ
ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**

«13» մարտ 2018թ. թիվ 2

**ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ ՇԱՎԱՐՇ ՄԵԼԻՔՍԵԹԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ, ԷԴԳԱՐ ԳՐԻԳՈՐԻ
ՆԱՐԱՅԱՆԻ, ԷՐԻԿ ԳԱԳԻԿԻ ԱԲՈՎՅԱՆԻ, ԳԱՐԻԿ ԱՐՏԱՇԵՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը, հաշվի առնելով Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 03.10.2017թ. եւ 13.12.2017թ. նիստերի թիվ 3 եւ թիվ 4 արձանագրությունները, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունը՝ Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հանձնարարել Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովին ուսումնասիրել զոհված զինծառայողներ Շավարշ Մելիքսեթի Մելիքյանի, Էդգար Գրիգորի Նարայանի, Էրիկ Գագիկի Աբովյանի, Գարիկ Արտաշեսի Վարդանյանի, ինչպես նաև վերջիններիս շահառուների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից ստացված փաստաթղթերը (տեղեկությունները) եւ ընդունել հատուցման գումարների վերաբերյալ որոշումներ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված զոհված զինծառայողների շահառուներին հատուցումներն իրականացնել զոհված զինծառայողների զինվորական կոչումներին համապատասխան՝ տրամադրելով Օրենքով սահմանված ամսական հավասար վճարները՝ 20 տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**Ջինժառայողների կյանքին կամ առողջությանը
պատճառված վնասների հատուցման
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ՝**

Վիգեն Սարգսյան